Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2024թ. նոյեմբերի 11-ից 14-ը Իրանի Իսլամական Հանրապետություն (ք. Չաբահար) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ</u>**

   Արտակ Պապյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ</u>**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>**

   Իրանի Իսլամական Հանրապետություն, ք. Չաբահար նոյեմբերի 11-14-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   2023թ. մայիսի 8-ի N 486-Ա ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից իրականացվող աշխատանքների շրջանակներում այց:

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)</u>**

   Քննարկել Միջազգային բեռնափոխադրումների մուլտիմոդալ արագընթաց երթուղու գործարկման և իրանական Չաբահար նավահանգստում գործունեություն իրականացնելու հարցերը:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

   Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ և տարածաշրջանային ճանապարհատրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքներին առնչվող հարցեր:

   Ներկայացրել է ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը և դրա շրջանակում Իրանի Չաբահար նավահանգստում Հայաստանի ներկայացվածության հնարավոր հեռանկարները:

   Անդրադարձ է կատարվել Հայաստան-Իրան երկկողմ տնտեսական հարաբերություններին, առևտրատնտեսական փոխգործակցությանն առնչվող հարցերի:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Հանդիպումներ են տեղի ունեցել ԻԻՀ ճանապարհների և քաղաքաշինության նախարարի տեղակալ, ԻԻՀ նավագնացության և նավահանգիստների կազմակերպության տնօրեն Ալի Աքբար Սաֆայիի և ԻԻՀ արդյունաբերության,

հանքերի և առևտրի նախարարի տեղակալ, ԻԻՀ առևտրի զարգացման կազմակերպության տնօրեն Մոհամմադ Ալի Դեհղան Դեհնավի հետ:

Ինչպես նաև հայկական մասնավոր լոգիստիկ ընկերությունների մասնակցությամբ այցելություն Չաբահար նավահանգիստ և ազատ տնտեսական գոտի, ինչպես նաև հանդիպումներ նույնանուն նավահանգստի և ազատ տնտեսական գոտու ղեկավարության հետ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պայմանավորվածություն ձեռք բերվեց Չաբահար նավահանգստից հայկական մասնավոր լոգիստիկ ընկերությունների կողմից բեռների փոխադրման համար տրամադրել զեղչեր:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հետագա ընթացքի պատասխանատու՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

Ա. Պապյան

15 նոյեմբերի 2024թ.